

«16» նոյեմբեր 2020թ.

No 4020 - Լ

«ՈՒՄԻԼՈՆ (ԳԵԼ)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Ումիլոն (գել)» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ հրամանը տեղադրել առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված

Առողջապահության նախարարի
2020թ. նոյեմբերի 16 - ի
4020 - Լ հրամանի

ՀՐԱՀԱՆԳ

«ՈՒՄԻԼՈՆ (ԳԵԼ)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ումիլոն (գել)» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է գործության համար պատրաստի անգույնից մինչև բաց դեղին գույնի, սպիրտի կամ սպիրտի և բուրանյութի հոտով, թափանցիկ մածուցիկ գելանման հեղուկ: Որպես ազդող նյութ պարունակում է պրոպանոլ-1(N-պրոպանոլ) - 10% , պրոպանոլ-2 (իզոպրոպանոլ) - 50%, ՔԱՄ խառնուրդ (բենզլեթոնիում քլորիդ, ալկիլդիմեթիլ բենզիլամոնիումի քլորիդ) - 0,1% (գումարային), ռեոլոգիայի վերափոխիչ, ինչպես նաև ձեռքերի խնամքի համար նախատեսված ֆունկցիոնալ բաղադրիչներ: Միջոցի pH – $7,0 \pm 1,0$:

2. Միջոցը թողարկվում է.

- 1) 50 մլ, 100 մլ, 150 մլ, 200մլ տարողությամբ պոլիմերային սրվակներով՝ ցողացրման, դոզավորող գլխադիրներով կամ սերտ փակող պտտվող կափարիչներով,
- 2) 0,25-ից մինչև 1,0 դմ³ ծավալով պոլիմերային սրվակներով դոզավորող գլխադիրներով կամ սերտ փակվող կափարիչներով,
- 3) 2,0-ից մինչև 200 դմ³ ծավալով, պտտվող կափարիչներով պոլիմերային տարաներով:

3. Միջոցի պիտանելիության ժամկետը արտադրողի փաթեթավորմամբ (այդ թվում այն բացելուց հետո) 5 տարի է՝ փաթեթավորման հերմետիկությունը և միջոցի պահպանման պայմանները ապահովելու դեպքում:

4. Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամ դրական մանրէների, ներառյալ տուբերկուլոզի հարուցչի (թեստավորված է *Mycobacterium terrae*-ի վրա), վիրուսների (մարդու բուրբ հայտնի վիրուս-ախտածինների նկատմամբ, այդ թվում ընդերային և արտաընդերային հեպատիտների (ներառյալ հեպատիտ Ա-ն, Բ-ն և Ց-ն), ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի վիրուսների նկատմամբ) նկատմամբ և սնկասպան (կանդիդոզներ, դերմատոֆիտիաներ) հատկություններով: Միջոցն օժտված է երկարատև՝ մինչև վեց ժամ պահպանվող հակամանրէային հատկությամբ:

5. Ըստ սուր թունավորության չափանիշների, ԳՈՍՍ 12.1.007-76-ին համապատասխան, միջոցը պատկանում է քիչվտանգավոր նյութերի 4-րդ դասին՝ ստամոքսի մեջ ներմուծվելիս և մաշկի վրա լցվելիս: Ներշնչական (ինհալյացիոն) ազդեցության ժամանակ միջոցը պատկանում է քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին (քիմիական ախտահանիչ նյութերի դասակարգում ըստ ցնդելիության աստիճանի (20°C)): Միջոցը կիրառման առաջարկվող ռեժիմներով տեղային-գրգռող, մաշկային-ռեզորբտիվ և գերզգայունացնող հատկություններն արտահայտված չեն: Աչքերի մեջ լցվելու ժամանակ առաջացնում է գրգռում: ՍԹԽ-ն (սահմանային թույլատրելի խտություն) աշխատանքային գոտու օդում Պրոպանոլ-1 և պրոպանոլ-2՝ $2-10\text{մգ/մ}^3$, վտանգավորության 3-րդ դաս (հոլորշիներ), ՉԱՄ ՍԹԽ-ն աշխատանքային գոտու օդում՝ 1մգ/մ^3 , վտանգավորության 2-րդ դաս (աէրոզոլ):

6. Միջոցը նախատեսված է բուրբ տեսակի և մակարդակների բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն) (հիվանդանոց, պոլիկլինիկա, առողջարան, պրոֆիլակտորիա, վերականգնողական կենտրոն, ցերեկային ստացիոնար, բուժսանմասեր և բուժկետեր, տարեցների և հաշմանդամների տներ, բուժակային և բուժակ-մանկաբարձական կետեր, դիսպանսեր, հոսպիտալ, ատամնաբուժական կաբինետներ, ծննդաբերական ստացիոնար, նորածինների պալատներ, ինտենսիվ

թերապիայի և վերակենդանացման բաժանմունք, վնասվածքաբանության, այրվածքային բաժանմունքներ, օրգանների փոխպատվաստման կենտրոններ, բժշկական պրոֆիլային կենտրոններ, արյան փոխներարկման և շտապ օգնության կայաններ), կլինիկական, մանրէաբանական, իմունաբանական, ՊՇՌ և այլ լաբորատորիաներում, մանկական նախադպրոցական և դպրոցական հաստատությունների բուժաշխատողների կողմից, սպորտի և մշակույթի հաստատություններում, սոցիալական ծառայություն տրամադրող (տարեցների և հաշմանդամների տներ) հաստատություններում, քիմիադեղագործական, կենսատեխնոլոգիական և օժանելիքակոսմետիկ արտադրություններում, առողջարանակուրորտային հաստատություններում, առևտրի և հանրային սննդի կազմակերպություններում, սննդամթերքի և վերամշակման արդյունաբերություններում, սպասարկման ոլորտի օբյեկտներում (այդ թվում վարսավիրանոց, գեղեցկության սրահ և այլն) ինչպես նաև շտապ օգնության մեքենաներում տեղափոխման պայմաններում, բնակչության կողմից կենցաղում:

7. Միջոցը կիրառման համար պատրաստ հեղուկի ձևով նախատեսված է.

1) Բոլոր ուղղվածությունների բժշկական կազմակերպությունների (ներառյալ ծննդատները, նեոնատոլոգիական բաժանմունքներն ու նորածնային պալատները) բժշկական անձնակազմի ձեռքերի հիգիենիկ մշակման համար,

2) Վիրաբույժների, վիրահատարանի բուժքույրերի, մանկաբարձուհիների և վիրահատությունների իրականացմանը, ծնունդների ընդունմանը մասնակցող այլ անձանց ձեռքերի հիգիենիկ մշակման համար,

3) Դոնորների արմնկային ծալքի, հոդերի պունկցիայից և կաթետերիզացիայից առաջ՝ մաշկի մշակման համար,

4) Բժշկական կազմակերպությունների պացիենտների վիրահատական և նարարկային դաշտերի մշակման համար,

5) Ուտնաթաթերի կանխարգելիչ մշակման համար:

2. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ

8. Միջոցն իրենից ներկայացնում է կիրառման համար պատրաստ լուծույթ: Միջոցը չի նոսրացվում և չի ակտիվացվում:

9. Կիրառումը բժշկական կազմակերպություններում.

1) Ձեռքերի հիգիենիկ մշակում. Ձեռքերի չոր դաստակների վրա (առանց օճառով ու ջրով նախապես լվանալու) լցնում են 1,5 մլ միջոց և ներմերսում մաշկին առնվազն 30 վայրկյան տևողությամբ՝ մինչև մաշկի լրիվ չորանալը, հատուկ ուշադրություն դարձնելով հարեղնագային մասերի և միջմատային հատվածների վրա:

2) Վիրաբույժների ձեռքերի մշակում. Միջոցի կիրառումից առաջ, ձեռքերի դաստակներն ու նախաբազուկները նախապես մանրակրկիտ լվանում են հոսող տաք ջրով և օճառով, որից հետո չորացնում են մանրէազերծ թանգիվե անձեռոցիկով: Այնուհետև ձեռքերի դաստակների վրա կրկնակի լցնում են միջոցի 3-ական մլ և այն ձեռքերի և նախաբազուկների մաշկին (պահելով ձեռքերը խոնավ վիճակում) 1 րոպե տևողությամբ: Մշակման ընդհանուր ժամանակը կազմում է 2 րոպե: Մաշկի ոչ բավարար խոնավեցման դեպքում միջոցը ձեռքերի վրա լցվում է լրացուցիչ: Մանրէազերծ ձեռնոցները հագնում են ձեռքերին միջոցի լրիվ չորանալուց հետո:

3) Դոնորների արմնկային ծալքի, հոդերի պունկցիայից և կաթետերիզացիայից առաջ մաշկի մշակում. Մաշկը կրկնակի շփում են միջոցով առատ թրջված առանձին մանրէազերծ թանգիֆե խծուծներով: Մշակման հաջորդականությունը՝ կենտրոնից դեպի ծայրամաս: Մշակումից հետո ազդեցության ժամանակը 2 րոպե է: Վիրահատության նախօրեին պացիենտը ցնցուղ (լոգանք) է ընդունում, փոխում ներքնաշորերը:

4) Ներարկման դաշտի մշակում, այդ թվում պատվաստումից առաջ, և մաշկի ամբողջականության խախտման հետ կապված այլ միջամտություններից առաջ. Մաշկը շփում են միջոցով առատ թրջված մանրէազերծ բամբակե խծուծով: Մշակումից հետո ազդեցության ժամանակը 30 վայրկյան է:

5) Ոտնաթաթերի կանխարգելիչ մշակում. Միջոցով առատ (առնվազն 3 մլ) թրջում են բամբակե խծուծը և մանրակրկիտ մշակում յուրաքանչյուր ոտնաթաթը առանձին խծուծով: Յուրաքանչյուր ոտնաթաթի մշակումը առնվազն 30 վայրկյան:

10. Կիրառումը այլ հաստատություններում և բնակչության կողմից կենցաղում.

1) Ձեռքերի հիգիենիկ մշակում. Ձեռքերի դաստակների վրա լցնում են 1,5 մլ միջոց և 30 վայրկյան ներմերսում մաշկին:

2) Ներարկման դաշտի մշակում. Մաշկը շփում են միջոցով առատ թրջված մանրէազերծ բամբակե խծուծով: Մշակումից հետո ազդեցության ժամանակահատվածը 30 վայրկյան է:

3) Ոտնաթաթերի կանխարգելիչ մշակում. Միջոցով առատ (առնվազն 3 մլ) թրջում են բամբակե խծուծը և մանրակրկիտ մշակում յուրաքանչյուր ոտնաթաթը առանձին խծուծով: Յուրաքանչյուր ոտնաթաթի մշակումը առնվազն 30 վայրկյան:

3. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

11. Միջոցը կիրառվում է միայն արտաքին կիրառման համար:

12. Չլցնել վերքերի և լորձաթաղանթների վրա:

13. Խուսափել միջոցն աչքի մեջ լցվելուց:

14. Հեշտ բոցավառվում է: Թույլ չտալ շփում բաց կրակի հետ, ներառյալ տաքացուցիչ սարքերը: Չծխել:

15. Չօգտագործել միջոցի նշված օգտագործման ժամկետը լրանալուց հետո:

16. Առանց նոսրացման չլցնել կոյուղու և ձկնաբուծական ջրամբարների մեջ:

4. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՏԱՀԱԿԱՆ

ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

17. Աչքերի մեջ միջոցի պատահական լցվելու դեպքում՝ անհրաժեշտ է աչքերն առատ լվանալ հոսող ջրով և կաթեցնել նատրիումի սուլֆացիլի 30%-ոց լուծույթ:

18. Միջոցը ստամոքսի մեջ պատահական ընկնելու դեպքում իրականացնել ստամոքսի լվացում սենյակային ջերմաստիճանի ջրով և առաջացնել փսխում: Այնուհետև տուժածին խմեցնել ադսորբենտով մի քանի բաժակ ջուր (10-15 հաք մանրացված ակտիվացված ածուխ մեկ բաժակ ջրին):

5. ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ

19. Միջոցը հեղուկի ձևով արտադրվում է 0.05-ից մինչև 1 լ ծավալով պոլիմերային տարաներով՝ դոզավորող, ցողացրման գլխադիրներով կամ սերտ ներպտուտակվող կափարիչով, 5 լ-ից մինչև 20 լ ծավալով պոլիմերային տարաներով՝ ներպտուտակվող կափարիչով:

20. Միջոցի փոխադրումն իրականացվում է ցամաքային և ջրային տրանսպորտով՝ տրանսպորտի տվյալ տեսակի համար գործող և միջոցի ու տարայի անվնասությունը երաշխավորող դյուրավառ հեղուկների փոխադրման կանոններին համապատասխան:

21. Վթարային իրավիճակներում միջոցի մեծ քանակության արտահոսքի ժամանակ վրան լցվում է ավազ, հող կամ սիլիկագել (չօգտագործել բոցավառվող նյութեր, օրինակ՝ տաշեղներ, թեփ), հավաքվում կափարիչով տարայի մեջ՝ հետագա օգտահանման համար: Մնացորդը լվացվում է մեծ քանակությամբ ջրով: Մեծ քանակությամբ միջոցի մաքրման ժամանակ օգտագործում են անհատական պաշտպանության միջոցներ՝ արտահագուստ, ճութակոշիկներ, ռետինե կամ պոլիէթիլենե ձեռնոց, A մակնիշի պատրոնով РПГ-67 կամ РУ-60М տեսակի ունիվերսալ շնչադիմակներ կամ արտադրական հակագազ: Մաքրումից հետո աղտոտված տեղը լվացվում է մեծ քանակությամբ ջրով:

22. Շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումներ. Չնոսրացված միջոցը չի թույլատրվում լցնել մակերեսային կամ ստորգետնյա ջրերի և կոյուղու մեջ: Նոսրացվում է մեծ քանակությամբ ջրով:

23. Միջոցը պահվում է ծածկ ունեցող, օդափոխվող պահեստային սենքերում արտադրողի սերտ փակ փաթեթավորմամբ՝ հեշտ բոցավառվող հեղուկների պահման կանոններին համապատասխան՝ դեղերից առանձին, երեխաների համար անհասանելի, -5°C –ից մինչև $+30^{\circ}\text{C}$ և դրանից ոչ բարձր ջերմաստիճանում, տաքացուցիչ սարքերից, բաց կրակից հեռու (առնվազն 1 մ) և արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված տեղերում:

24. Միջոցի պիտանելիության ժամկետն արտադրողի փաթեթավորմամբ (այդ թվում այն բացելուց հետո) 5 տարի է՝ փաթեթի հերմետիկությունը և պահման պայմանները պահպանելու դեպքում:

6. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆԱԼԻՏԻԿ ՄԵԹՈԴՆԵՐ

25. Հսկվող ցուցանիշները և նորմերը. Միջոցը հսկվում է հետևյալ որակի ցուցանիշներով՝ արտաքին տեսք, հոտ, խտություն 20°C-ում, միջոցի ջրաձնային ցուցանիշ (pH), պրոպանոլ-1-ի, պրոպանոլ-2-ի և բենզոլէթոնիում քլորիդի զանգվածային բաժին: դրանցից յուրաքանչյուրի հսկվող ցուցանիշները և նորմաները ներկայացված են սույն գրահանգի աղյուսակում:

Աղյուսակ

Միջոցի որակի ցուցանիշներ

Ցուցանիշ	Նորմա
Արտաքին տեսք, հոտ	Անգույնից մինչև բաց դեղին գույնի, թափանցիկ, մածուցիկ գելանման հեղուկ, սպիրտի կամ սպիրտի և բուրանյութի բնորոշ հոտով
Խտությունը 20°C ջերմաստիճանում, գ/սմ ³	0,885±0,020
Միջոցի ջրաձնային իոնների ակտիվության ցուցանիշ, pH	7,0±1,0
Պրոպանոլ-1-ի զանգվածային բաժին, %	10,0±1,0
Պրոպանոլ-2-ի զանգվածային բաժին, %	50,0±3,0
ԶԱՄ(բենզէթոնիում քլորիդ, ալկիլդիմեթիլ բենզիլամոնիումի քլորիդ) զանգվածային բաժին, գումարային, %	0,1±0,02

26. Արտաքին տեսքի և հոտի որոշում. Միջոցի արտաքին տեսքը որոշում են ակնադիտորեն, հոտն գնահատում են օրգանոլեպտիկ եղանակով՝ ԳՕՍՏ 29188.0-2014-ի պահանջներին համապատասխան: Այդ նպատակով 30-32 մմ ներքին տրամագծով անգույն ապակուց փորձանոթի մեջ կիսով չափ լցնում են միջոցը դիտում արտացոլված կամ անցողիկ լույսի տակ: Հոտը գնահատում են օրգանոլեպտիկ եղանակով:

27. Խտության որոշում 20°C ջերմաստիճանում: Խտությունը 20°C ջերմաստիճանում որոշում են ԳՕՍՏ 18995.1-ին համապատասխան:

28. Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշի որոշում, միջոցի pH:

1) Սարքեր, ռեակտիվներ և նյութեր.

ա. ցանկացած մակնիշի pH-մետր՝ 0.1 չգերազանցող սխալանքով,

բ. 50 սմ³ տարողությամբ ապակե բաժակ՝ ըստ ԳՕՍՏ 25336-82:

2) Փորձարկման իրականացում. Բաժակի մեջ լցնում են միջոց (30-40 սմ³ ծավալով) և pH-մետրով չափում միջոցի pH-ը՝ համաձայն դրան կից հրահանգի:

29. Պրոպանոլ -1, պրոպանոլ-2 զանգվածային բաժնի որոշում:

1) Սարքավորումներ, ռեակտիվներ:

ա. գազային քրոմատոգրաֆ բոցա-իոնիզացնող դետեկտորով «Քրոմատեկ Կրիստալ 5000.1» տիպի, հագեցած սարքավորման կառավարման, անհատական համակարգչի քրոմատոգրաֆիական տվյալների հավաքման և մշակման համակարգով:

բ. մազանոթային սյուն Elite-WAXETR (անշարժ ֆազա պոլիէթիլենգլիկոլ) 50 մ երկարությամբ, 0,32 մմ ներքին տրամագծով, 1 մկմ ֆազայի շերտի հաստությամբ,

գ. կրիչ գազ գազահեղուկային քրոմատոգրաֆիայի համար՝ «հատուկ մաքուր» («очы») մակնիշի հելիում՝ ըստ ТУ 51-940-80,

դ. ջրածին ըստ ԳՈՍՏ 3022, բալոնից կամ ГБЧ տեսակի ջրածնի գեներատորից,

ե. Օդ բալոնից կամ կոմպրեսորից,

զ. ապաիոնիզացված կրկնակի թորած ջուր քանակային հակադրությունը առնվազն $1 \cdot 10^6 \text{ Ohm} \cdot \text{սմ}$,

է. իզոպրոպիլ սպիրտ, ըստ ТУ 6-09-4522-77, մաքրությունը որոշվում է քրոմատագրորեն,

ը. պրոպիլ սպիրտ ըստ TY 6-09-783-76, մաքրությունը որոշվում է քրոմատագրորեն,
թ. Ացետոնիտրիլ (էտալոն) ըստ TY 6-09-3534-87, մաքրությունը որոշվում է քրոմատագրորեն,

ժ. իզոբութիլ սպիրտ ըստ ԳՕՍՍ 6016-77,

ի. միկրոներարկիչ $1 \cdot 10^{-2}$ սմ³ (10 մկլ) տարողությամբ՝ $0.2 \cdot 10^{-3}$ սմ³ (0.2 մկլ) բաժանքի արժեքով,

լ. չափիչ կոլբա 50 սմ³ տարողությամբ ըստ ԳՕՍՍ 1770-74,

խ. լաբորատոր կշեռք ± 0.2 մգ կշռման ճշգրտությամբ «Sartorius BP-210S» տեսակի: Թույլատրվում է կիրառել համանման տեխնիկական բնութագրերով սարքավորումներ, ինչպես նաև ռեակտիվներ՝ նշվածից ոչ ցածր որակով:

2) Հետազոտության նախապատրաստում:

ա. Ստուգաճշտման հարաբերական գործակցի (K) որոշման համար նմուշը պատրաստում են հետևյալ կերպ. 50 սմ³ տարողությամբ հղկված խցանով չափիչ կոլբայի մեջ լցնում են 0,3-0,4 գ իզոպրոպիլ սպիրտ, 0,3-0,4 գ պրոպիլ սպիրտ, 0,3-0,5 գ ացետոնիտրիլ (էտալոն): Յուրաքանչյուր բաղադրիչի կշռման արդյունքները գրամներով գրանցում են մինչև չորրորդ տասնորդական նշանը: Փորձանոթի մեջ լցված բաղադրիչներին ավելացնում են իզոբութիլ սպիրտ մինչև նշանը և խառնում են:

բ. Պրոպիլ և իզոպրոպիլ սպիրտների զանգվածային բաժնի որոշման համար նմուշը պատրաստում են համանման կերպով (սույն հրահանգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի ա. ենթակետի), հետազոտվող նմուշին ավելացնելով ացետոնիտրիլ (էտալոն)՝ մոտավորապես որոշվող բաղադրիչների քանակությամբ:

3) Հետազոտության իրականացում.

ա. Քրոմատոգրաֆի աշխատանքի պայմանները.

- Ինժեկտորի ջերմաստիճան 240°C ,
- Գազ-կրիչի հոսքի արագություն $0,08$ մլ/վրկ,
- Սյան թերմոստատի ջերմաստիճանի ծրագրավորում՝
 - Իզոթերմիկ ռեժիմ 50°C ՝ ում 4 րոպեի ընթացքում,
 - Տաքացում մինչև 130°C ՝ 4°C /րոպե արագությամբ,
 - Տաքացում մինչև 200°C ՝ 10°C /րոպե արագությամբ,

- Իզոթերմիկ ռեժիմ 200°C 2 թույլի ընթացքում,

– հոսքի բաժանում 1:10:

բ. Դետեկտորի աշխատանքի պայմաններ.

- Դետեկտորի ջերմաստիճան 240°C,
- Ջրածնի և օդի ծախսը 0,5մլ/վ և 5մլ/վ համապատասխանաբար,
- Նմուշի ծավալը $0,1 \cdot 10^{-3}$ - $0,3 \cdot 10^{-3}$ սմ³:

գ. Ստուգաճշտման գործակցի որոշման համար պատրաստում են երկու արհեստական խառնուրդ (սույն հրահանգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի ա. ենթակետ) և դրանցից յուրաքանչյուրը քրոմատոգրաֆում 10 անգամ: Փորձարկման իրականացման համար պատրաստում են հետազոտվող օրինակի երկու նմուշ (սույն հրահանգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի բ. ենթակետ) և յուրաքանչյուրը են քրոմատոգրաֆում 3 անգամ:

4) Արդյունքների մշակում.

ա. Պրոպիլ և իզոպրոպիլ սպիրտների զանգվածային բաժինը (C) տոկոսներով հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$C = \frac{m_{էլ} \cdot S \cdot K}{m \cdot S_{էլ}} \cdot 100, \text{ որտեղ}$$

m – հետազոտվող նմուշի զանգված, գր,

$m_{էլ}$ – ներքին էտալոնի զանգված՝ հաշվի առնելով մաքրությունը, գր,

S – որոշվող բաղադրիչի պիկի մակերես,

$S_{էլ}$ – ներքին էտալոնի պիկի մակերես,

K – ստուգաչափման հարաբերական ցուցանիշ, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$K = \frac{m_1 \cdot S_{էլ}}{S \cdot m_{էլ}}, \text{ որտեղ՝}$$

m_1 – պրոպիլ (իզոպրոպիլ) սպիրտի զանգված՝ հաշվի առնելով մաքրությունը, գր:

բ. Հարաբերական ստուգաչափման գործակցի որոշման արդյունքների միջև թույլատրելի տարբերությունը չպետք է գերազանցի 0.1-ը: Որպես վերջնական արդյունք ընդունում են երկու զուգահեռ որոշումների արդյունքների միջին

թվաբանականը, որոնց միջև թույլատրելի տարբերությունը չի գերազանցում 10%-ը:
Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը
կազմում է $\pm 4,0 \%$ $p=0.95$ հավանականության վստահելի միջակայքում:

30. ՉԱՄ (ալկիլդիմեթիլ բենզիլամոնիումի քլորիդի և բենզլթոնիում քլորիդի)
զանգվածային բաժնի որոշում (գումարային):

31. Չափման միջոցներ, ռեակտիվներ և լուծույթներ.

- 1) Լաբորատոր կշեռք ԳՕՍՏ 24104-88 2-րդ դասի ճշգրտության 200 գր կշռման
առավելագույն սահմանով,
- 2) բյուրետ 1-3-2-25-0.1,
- 3) հղկած կափարիչով կոնաձև փորձանոթ КН 1-250-24/29 տիպի՝ ըստ ԳՕՍՏ
25336,
- 4) ծծմբական թթու ըստ ԳՕՍՏ 4204,
- 5) քլորոֆորմ՝ ըստ ԳՕՍՏ 20015,
- 6) նատրիումի դոդեցիլսուլֆատ ըստ ТУ 6-09-64, 0.004Ն ջրային լուծույթ,
- 7) նատրիումի սուլֆատ տասջրային, հ.հ.մ. ըստ ԳՕՍՏ 4171,
- 8) մեթիլենային երկնագույն ըստ ТУ 6-09-29,
- 9) ցետիլպիրիդինիումի քլորիդ 1-ջրային՝ «Մերկ» (Գերմանիա)
կազմակերպության արտադրության հիմնական նյութի առնվազն 99%
պարունակությամբ կամ համանման որակավորման ռեակտիվ ըստ գործող
նորմատիվային փաստաթղթերի, 0.004Ն ջրային լուծույթ,
- 10) թորած ջուր՝ ըստ ԳՕՍՏ 6709:

32. Հետազոտության նախապատրաստում.

1) Ինդիկատորի, ցետիլպիրիդինիումի քլորիդի և նատրիումի դոդեցիլսուլֆատի
լուծույթների պատրաստում.

ա) Ինդիկատորի լուծույթ ստանալու համար 1 դմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ
լցնում են 30 սմ³ մեթիլեն կապույտի 0,1% ջրային լուծույթ, 7.0 սմ³ խտացրած
ծծմբական թթու, 110 գր նատրիումի սուլֆատ տաս ջրային և ծավալը թորած ջրով
հասցնում մինչև 1 դմ³:

բ) Ցետիլաիրիդինիումի քլորիդի 0.004Ն լուծույթը պատրաստում են 0.143 գ 1-ջրային ցետիլաիրիդինիումի քլորիդի կշռուկը, կշռված մինչև 0.0002 գր ճշտությամբ, 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ թորած ջրում լուծելով՝ ծավալը հասցնելով մինչև նիշը:

գ) Նատրիումի դոդեցիլսուլֆատի 0.004Ն ուծույթը պատրաստում են 0.116 գ նատրիումի դոդեցիլսուլֆատը 100 սմ³ տարողությամբ չափիչ գլանի մեջ լուծելով թորած ջրում՝ ծավալը հասցնելով մինչև նիշը:

2) Նատրիումի դոդեցիլսուլֆատի 0.004Ն լուծույթի շտկման գործակցի որոշում: 250 սմ³ տարողությամբ փորձանոթի մեջ 10 սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթին ավելացնում են 40 սմ³ թորած ջուր, այնուհետև 20 սմ³ ինդիկատորի լուծույթ և 15 սմ³ քլորոֆորմ: Ստացված երկֆազային համակարգը տիտրում են ցետիլաիրիդինիումի քլորիդի լուծույթով փակ կափարիչով փորձանոթի ինտենսիվ թափահարմամբ մինչև ստորին քլորոֆորմային շերտի անգույնացումը: Տիտրումն իրականացնում են ցերեկային լույսի տակ: Երկֆազային համակարգի գույնը որոշում են անցողիկ լույսի տակ:

33. Հետազոտության իրականացում: Հետազոտվող նմուշի 25-ից 30գ կշռուկը, վերցված մինչև 0.0002 գր ճշգրտությամբ, լուծում են 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ թորած ջրում՝ ծավալը հասցնելով մինչև նշանը: 250 սմ³ տարողությամբ կոնաձև կոլբայի մեջ մեջ 5սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթին ավելացնում են 45սմ³ թորած ջուր, 20 սմ³ ինդիկատորի լուծույթ և 15 սմ³ քլորոֆորմ: Թափահարումից հետո ստացվում է կապույտ գույն ներկված ստորին քլորոֆորմային շերտով երկֆազ հեղուկ համակարգ: Այն տիտրում են միջոցի պատրաստված լուծույթով փակ կոլբայի մեջ ինտենսիվ թափահարելով մինչև ստորին քլորոֆորմային շերտի անգույնացումը: Տիտրումն իրականացնում են ցերեկային լույսի տակ: Երկֆազային համակարգի գույնը որոշում են անցողիկ լույսի տակ:

34. Արդյունքների մշակում: ՉԱՄ զանգվածային բաժինը (X) տոկոսներով որոշում են հետևյալ բանաձևով.

$$X = \frac{0.00160 \cdot V \cdot K \cdot 100}{V_1 \cdot m} \cdot 100, \quad \text{որտեղ՝}$$

0.00160 –ալկիլդիմերիլ բենզիլամոնիումի քլորիդի և բենզլթոնիումի քլորիդի միջին զանգված, որը համապատասխանում է նատրիումի դոդեցիլսուլֆատի $C(C_{12}H_{25}SO_4Na)=0.004$ մոլ/դմ³ խտությամբ (0.004Ն) 1 սմ³ լուծույթին, գ,

V – նատրիումի դոդեցիլսուլֆատի C $(C_{12}H_{25}SO_4Na)=0,004$ մոլ/դմ³ (0,004Ն) խտությամբ տիտրվող լուծույթի ծավալ, 5 սմ³,

K –նատրիումի դոդեցիլսուլֆատի C $(C_{12}H_{25}SO_4Na)=0,004$ մոլ/դմ³ (0,004Ն) խտությամբ լուծույթի շտկման գործակից,

100 – հետազոտվող նմուշի նոսրացման գործակից,

V₁ – տիտրման ժամանակ ծախսված միջոցի լուծույթի ծավալը, սմ³,

m – հետազոտվող նմուշի զանգված, գ:

35. Որպես հետազոտության արդյունք ընդունում են երեք զուգահեռ որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունը չի գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 0.3%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 4\%$ ՝ $p=0.95$ վստահելիության հավանականության միջակայքում: